

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ ԾԱՆՈՒՑՈՒՄ Է**  
**ԿԱՍԵՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՎԵՐՄԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը ծանուցում է, որ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2021 թվականի փետրվարի 05-ի «Կասեցված մրցույթների անցկացումը վերսկսելու մասին» N 37-Ա հրամանի համաձայն վերսկսում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի (ծածկագիր՝ 96-1.1-Ղ4-1) և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 96-1.1-Մ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2020 թվականի սեպտեմբերի 25-ին հայտարարված և 2020 թվականի սեպտեմբերի 29-ի կասեցված արտաքին մրցույթների անցկացումը:

**1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ (ծածկագիր՝ 96-1.1-Ղ4-1)**

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի փետրվարի 8-ից մինչև փետրվարի 16-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի մարտի 10-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

**2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ (ծածկագիր՝ 96-1.1-Մ4-1)**

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են 2021 թվականի փետրվարի 8-ից մինչև փետրվարի 16-ը ներառյալ՝ աշխատանքային օրերին: Դիմումները յուրաքանչյուր աշխատանքային օր ընդունվում են ժամը 10:00-ից 12:30-ը և 14:30-ից 17:00-ը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2021 թվականի մարտի 10-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2021 թվականի մարտի 12-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, վարչական շենք):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

05 փետրվարի 2021 թվականի N 37-Ա

**ԿԱՍԵՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված կարգի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի N 333-Ա հրամանը՝ **հրամայում եմ**.

1. Վերսկսել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի (*ծածկագիր՝ 96-1.1-Ղ4-1*) և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետի (*ծածկագիր՝ 96-1.1-Մ4-1*) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2020 թվականի սեպտեմբերի 25-ին հայտարարված և 2020 թվականի սեպտեմբերի 29-ի կասեցված արտաքին մրցույթների անցկացումը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

2021 թվականի փետրվարի 05  
ք. Հրազդան



Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ